# ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիրքորոշումը «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ

**1**. «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածով 14 կետերի ներքո սահմանվել են կամավոր աշխատանքի սուբյեկտների հիմնական նպատակները:

Հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ *կամավոր աշխատանքի իրականացման նպատակների նշված ցանկը սահմանափակ է,* որից ենթադրվում է, որ այլ նպատակներով կամավոր աշխատանք իրականացվել չի կարող: Գտնում ենք, որ կամավոր աշխատանքի հիմնական նպատակները սահմանելիս անհրաժեշտ է հիմք ընդունել այն իրողությունը, որ հասարակական հարաբերություններն արագ զարգացման միտում ունեն և անընդհատ ի հայտ են գալիս նոր հասարակական պահանջմունքներ: Նաև գտնում ենք, որ կամավոր աշխատանքի և այդ աշխատանքի սուբյեկտների կամքի ազատությունը Օրենքով առաջարկվող կարգավորմամբ սահմանափակվում է՝ հետապնդելով ոչ իրավաչափ նպատակ, քանի որ Օրենքի 5-րդ հոդվածով կամավոր աշխատանքի իրականացման համար սահմանվել են սահմանափակ թվով նպատակների ընդհանուր ձևակերպումներ: **Կամավոր աշխատանքը, որը համապատասխանում է ՀՀ օրենսդրությանը և օրենքով արգելված չէ, կարող է իրականացվել ցանկացած օրինական նպատակով, որի միակ նախապայմանը պետք է լինի հետապնդվող նպատակի և իրականացվող աշխատանքի օրինականության չափանիշը:**

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը 2001 թ. հանձնարարականի համաձայն խնդրել է Նախարարների կոմիտեին կոչ անել անդամ պետություններին **«ձգտել հայտնաբերել և վերացնել իրենց օրենքներում և պրակտիկայում ցանկացած խոչընդոտ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն խանգարում է անձանց մասնակցել կամավորական աշխատանքին»**[1]: Նշված վերաբերյալ միջազգային փորձագետների մեկնաբանության համաձայն՝ օրենսդիրները պետք է «ապահովեն, որ հատուկ նպատակներ հետապնդող օրենքները չեն սահմանափակելու կամավորների համար նպաստավոր միջավայրի բարելավման հնարավորությունը»[2]: Հակառակ դեպքում՝ ողջ հայեցակարգը աղավաղվելու է[3]: Իրավական դաշտը պետք է դյուրացնի, այլ ոչ թե

[1] https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=9136&lang=en
[2] https://hcav.am/draft-15-06-2020/
[3] https://hcav.am/draft-15-06-2020/

վերահսկի կամավորությունը: Օրենքը պետք է ապահովի, որ կամավորությունը լինի պաշտպանված և խրախուսվի, որ իրավական պահանջները չխոչընդոտեն կամավորությանը: Չափազանց կարգավորումը կարող է խոչընդոտել ինքնաբուխ նախաձեռնություններին, ծանրաբեռնել փոքր ՔՀԿ-ներին և թուլացնել կամավորների ոգին[4]:

**Վերը նշվածը հաշվի առնելով՝ առաջարկում ենք Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2.Կամավոր աշխատանքը կարող է իրականացվել նաև օրենքով չարգելված այլ նպատակներով»:**

**2.** Օրենքի 6-րդ հոդվածով սահմանվում են կամավոր աշխատանքի հետ կապված սահմանափակումներն ու առանձնահատկությունները: Մասնավորապես, համաձայն 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Հատուկ՝ նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող բնագավառում կամավոր աշխատանք կարող է կատարվել միայն՝ այդ աշխատանքի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող համապատասխան լիցենզիա կամ կրթության կամ անհրաժեշտ որակավորման մասին փաստաթուղթ ունենալու դեպքում»:

Գտնում ենք, որ առաջարկվող կարգավորումը խնդրահարույց է կամավոր աշխատանքի իրականացման նպատակներին չհամապատասխանելու տեսանկյունից, քանի որ անձը՝ համապատասխան մասնագիտական գիտելիքներով ու հմտություններով, օգտակար լինելու գիտակցության ձևավորման և **նոր հմտություններ ու փորձառություն ձեռք բերելուն նպաստելու նպատակով** աշխատանքի համապատասխան իրավասություն չունենալու դեպքում, **հնարավորություն չի ունենալու կատարելու կամավոր աշխատանք:** Գտնում ենք, որ նշված դեպքում կազմակերպությունն ինքը պետք է գնահատի կամավոր աշխատանք կատարողի մասնագիտական գիտելիքները և հնարավորությունները՝ կամավոր աշխատանքն իրականացնելու համար, հիմնվելով իր գործունեության առանձնահատկությունների և ուղղությունների վրա և հաշվի առնելով իհարկե կամավորի աշխատանքի հնարավոր ազդեցությունը այլ անձանց կյանքի և առողջության վրա:

Վերը նշված խնդիրը հաշվի առնելով՝ գտնում ենք, որ անտրամաբանական է նախատեսել, օրինակ, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, այդ թվում՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների կամ արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի կանխարգելման կամ դրանց վերացման

[4] https://hcav.am/draft-15-06-2020/

աշխատանքներին, փրկարարական գործողություններին և տուժածներին օգնություն ցուցաբերելու, ինչպես նաև աղետների ռիսկերի կառավարման շրջանակներում իրականացվող միջոցառումներին կամավորի մասնակցելու հնարավորությունը, իսկ սահմանափակումը պայմանավորել համապատասխան լիցենզիա կամ որակավորում չունենալու հանգամանքով: Նշված սահմանափակումը հակասում է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 11-րդ կետերում սահմանված՝ անձի՝ իր գիտելիքներով ու հմտություններով օգտակար լինելու գիտակցության ձևավորմանը և **նոր կարողություններ ու փորձառություն ձեռք բերելուն նպաստելու նպատակի իրականացմանը**: Այլ կերպ, եթե կամավոր աշխատանքը կատարվում է կոնկրետ ոլորտում հմտություն կամ փորձառություն ձեռք բերելու նպատակներից ելնելով, և անձը դեռ չունի մասնագիտական գործունեության **իրավասություն,** ապա Օրենքով սահմանված կամավոր աշխատանքի նպատակները կրում են **հռչակագրային բնույթ**:

**Հետևաբար, վերը նշվածը հաշվի առնելով, առաջարկում ենք Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1.Հատուկ՝ նեղ մասնագիտական գիտելիքներ պահանջող բնագավառում կամավոր աշխատանք կարող է կատարվել մասնագիտական գործունեության կամ աշխատանքի համապատասխան գիտելիքների առկայության դեպքում՝ պահպանելով օրենքով նախատեսված սահմանափակումներն ու առանձնահատկությունները»:**

**3.** Օրենքի ուսումնասիրությունը վկայում է, որ կամավոր աշխատանք է համարվում միայն այն աշխատանքը, երբ անձը կամավոր աշխատանքի է ներգրավվում կազմակերպության կողմից և առկա է կամավոր աշխատանքի մասին կողմերի միջև կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագիր: Մասնավորապես, համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի՝ **առանց սույն օրենքով սահմանված կարգով կնքվող կամավոր աշխատանքի մասին պայմանագրի Կազմակերպության կողմից կամավոր աշխատանքի ներգրավվելու դեպքում,** Հայաստանի Հանրապետության քաղաքացին, օտարերկրյա քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձն այդ աշխատանքի մասով **չի համարվում կամավոր,** իսկ տվյալ աշխատանքը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի իմաստով համարվում է անօրինական:

Համաձայն Օրենքի «Կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները» վերտառությամբ 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ **կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները** կողմերի փոխադարձ համաձայնության վրա հիմնված այն

հարաբերություններն են, որոնք ծագում են կամավորի եւ Կազմակերպության միջեւ սույն օրենքով սահմանված կարգով կնքված **կամավոր աշխատանքի մասին պայմանագրով:**

Բացի այդ, Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հիմնական հասկացություններից հետևում է, որ **կամավոր է համարվում միայն այն անձը, ով կամավոր աշխատանք է կատարում Օրենքով սահմանված կարգով կնքված կամավոր աշխատանքի մասին պայմանագրի շրջանակներում:**

Գտնում ենք, որ առաջարկվող կարգավորումներն առավել քան խնդրահարույց են և չեն բխում կամավոր աշխատանքը խրախուսելու և խթանելու պետության պարտականություններից և չեն համապատասխանում Օրենքի 5-րդ հոդվածով սահմանված կամավոր աշխատանքի հիմնական նպատակներին. նախ, հարկ է նշել, որ կամավոր աշխատանքը կարող է կատարվել ինչպես կազմակերպության գործունեության շրջանակներում, այնպես էլ կազմակերպության գործունեության սահմաններից դուրս և որևէ կազմակերպության հետ առնչություն չունեցող աշխատանքներում, ինչպես օրինակ կամավորների կողմից շրջակա միջավայրի մաքրման և բարեկարգման համար կատարվող աշխատանքները: Հարց է առաջանում, թե նման դեպքում կամավոր աշխատանքի մասին պայմանագիրն ու՞մ միջև կարող է կնքվել, եթե կամավոր աշխատանքը չի կատարվում կազմակերպությունում կամ կամավոր աշխատանքի սուբյեկտ են հանդիսանում միայն կամավոր աշխատանք կատարող անձինք: Այլ կերպ, կամավոր աշխատանքի էությունից և սահմանումից չի բխում կազմակերպության՝ կամավոր աշխատանքի պարտադիր սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը: Օրենքի առաջարկվող կարգավորումները հիմք ընդունելով՝ ակնհայտ է, որ կամավորների կողմից նշված դեպքերում կատարվող աշխատանքը չի կարող համարվել կամավոր աշխատանք: Նման սահմանափակումը հակասում է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2001 թ. հանձնարարականի դրույթներին՝ **«ձգտել հայտնաբերել և վերացնել իրենց օրենքներում և պրակտիկայում ցանկացած խոչընդոտ, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն խանգարում է անձանց մասնակցել կամավորական աշխատանքին»:**

Բացի այդ, Օրենքով առաջարկվող կարգավորումներից ստացվում է, որ, օրինակ, արտակարգ իրավիճակներում կամ տարերային աղետների և արտակարգ բնույթ կրող այլ դեպքերի վերացման աշխատանքներին փրկարարական կամ այլ գործողություններին կամավորները չեն կարողանա մասնակցել, քանի դեռ դրա վերաբերյալ իրենց և համապատասխան կազմակերպության միջև չի կքնվել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր, մինչդեռ նշված իրավիճակներում հրամայական է հրատապ միջոցների և գործողությունների ձեռնարկումը, իրականացվող աշխատանքների համար հնարավորինս

սեղմ ժամկետում անհրաժեշտ ռեսուրսների ներգրավումը: Ուստի գտնում ենք, որ առաջակվող կարգավորումները կարող են սահմանափակել կամավորների համար նպաստավոր միջավայրի բարելավման հնարավորությունը:

**Հաշվի առնելով վերը նշվածն՝ առաջարկում ենք վերանայել կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելու Օրենքով սահմանված իմպերատիվ պահանջը, ինչպես նաև սահմանել, որ այն դեպքում, երբ կամավոր աշխատանքը չի կատարվում կազմակերպությունում, ապա կամավոր աշխատանքի մասին պայմանագիր չի կնքվում:**

**4.** Օրենքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կամավորին՝ իր կամավոր աշխատանքի հետ կապված դժբախտ դեպքերից, մասնագիտական հիվանդություններից ապահովագրելու հնարավորությունը սահմանվում է միայն կողմերի համաձայնության դեպքում, ինչպես նաև չկան լրացուցիչ կարգավորումներ՝ մինչև 25 տարեկան կամավոր աշխատանք կատարող անձանց համար: Մասնավորապես, համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Կամավոր աշխատանքի մասին պայմանագրում նշվում են՝ **կողմերի համաձայնությամբ ապահովագրություն նախատեսվելու դեպքում՝** կամավորին՝ իր կամավոր աշխատանքի հետ կապված դժբախտ դեպքերից, մասնագիտական հիվանդություններից կամ նրա քաղաքացիական պատասխանատվությունը՝ երրորդ անձանց վնաս պատճառելու կամ այլ ռիսկի հետ կապված ապահովագրության կարգը եւ պայմանները»:

«Երիտասարդների անդրազգային երկարաժամկետ կամավորական ծառայության խթանման մասին» Եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից, կարևորում, աջակցում և խթանում է կամավոր աշխատանքի իրականացումը՝ **մինչև 25 տարեկան երիտասարդների կողմից:** Մասնավորապես, Կոնվենցիան սահմանում է, որ, թեև կամավոր աշխատանքը չի վարձատրվում, սակայն **երիտասարդները կամավոր աշխատանքի իրականացման ընթացքում պետք է ստանան սնունդ, կացարան և գրպանի գումար, ինչպես նաև որոշակի առողջական ռիսկերի դեպքում պետք է նախատեսվի ապահովագրություն[5]:** ՀՀ-ն, վավերացնելով Կոնվենցիան, ստանձնել է կամավորությունը խթանելու և խրախուսելու պարտականություն, ինչը նաև նշանակում է, որ Օրենքով առաջարկվող կարգավորումները պետք է համապատասխանեն կամավոր աշխատանքի կատարման հետ կապված Կոնվենցիայով նախատեսված դրույթներին:

[5] https://assembly.coe.int/nw/xml/XRef/X2H-Xref-ViewHTML.asp?FileID=9136&lang=en

**Նշվածը հաշվի առնելով առաջարկում ենք խմբագրել Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը և այն համապատասխանեցնել Կոնվենցիայով սահմանված պահանջներին:**

**5.** Դրական գնահատելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարվող լրացումը, այն է՝ կամավոր աշխատանքի հետ կապված վեճերով հայցվորների համար դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ երաշխիքի ամրագրումը, **առաջարկում ենք լրացում կատարել նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում՝ կամավոր աշխատանքի հետ կապված վեճերի դեպքում նախատեսելով անվճար իրավաբանական օգնություն կամավոր աշխատանք կատարած անձանց համար:**